ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ՌՈՒԲԵՆԻ

ՀՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (սահմանադրական իրավունք)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Մ.Ա.Մկրտչյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ.Գ.Պապոյան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. մայիսի 14 -ին՝ ժամը 12^{00} -ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. ապրիլի 14 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. ՍՎԱՋՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Գիտելիքահենք հասարակությունից անցումը դեպի տեղեկատվական հասարակություն պայմանավորված է տեխնիկական և տեխնոլոգիական համակարգերի զարգացման աննախադեպ բարձր մակարդակով, որը բուհական կրթության համակարգի առջև նոր խնդիրներ է դնում:

Այսօր կրթությունը դարձել է ցանկացած երկրի քաղաքականության գերակայություններից մեկը, որի հետ հասարակությունը մեծ հույսեր է կապում: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում կրթության առջև ծառանում են սոցիալական մարտահրավերներ, որոնք իրենց հերթին կրթության բնագավառի աշխատողներին նոր պահանջներ են ներկայացնում: Արդյունքում իրավական կրթության բովանդակության, իրավագիտական առարկաների ուսուցման տեսության մեջ և մեթոդիկայում առաջացել են տեսական և մեթոդական լուրջ խնդիրներ, մասնավորապես «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման և ուսանողների կողմից գիտելիքների յուրացման արդյունավետության ապահովման առնչությամբ:

Իրավագիտական այլ առարկաների, այդ թվում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հիմնախնդիրը քննարկման առարկա է դարձել ռուս հետազոտողներ Գ.Պ.Դավիդովի, Ի.Յա.Լերների, Ս.Ի.Կուլենկոյի, Լ.Մ. Մատվիենկոյի, Ա.Ֆ.Նիկիտինի, Գ.Օրլովի, Ն.Ա.Պետրովայի, Ս.Մ.Ռավինի, Ե.Վ.Բելոգլազովայի, Կ.Գ.Կայումովայի, Տ.Յու.Կրամարովայի, Օ.Ե.Լեբեդևի, Տ.Վ.Խուդոյկինայի, Ա.Պ.Արշակյանի, և այլոց կողմից: Մեր հետազոտության համար հայեցակարգային նշանակություն ունեն Ն.Ա.Այվազյանի, Գ.Գ.Հարությունյանի, Վ.Վ. Ստեփանյանի, Վ.Հ.Հովհաննիսյանի, Մ.Գ.Աստվածատրյանի, Մ.Ա.Մկրտչյանի, Ս.Հ.Խաչատրյանի, Ա.Յու.Հովհաննիսյանի, Կ.Վ. Հարությունյանի, Ս.Մ.Խրիմյանի, Ս.Տ.Վարդումյանի, Վ.Ս.Աֆանասևի, Ե.Մ.Աշմարինայի, Կ.Մ.Լևիտանի, Ա.Ա.Վերբիցկու, Գ.Պ.Դավիդովի, Ի.Յա.Լերների, Օ.Ա.Նիկիտինայի, Յու.Ա.Զուբոկի, Ս.Ի.Վոլոդինայի, Ն.Վ.Կուրենկովայի, Ս.Յու.Մակարովի, Վ.Վ.Նավրոցկայի, Ե.Ա. Պևցովայի, Ա.Մ.Պոլիվետովայի, Ե.Ս.Փոլատի, Ն.Գ.Սուվորովայի և այլոց տեսական մոտեցումներն ու մշակումները:

Նշված հեղինակների կողմից դիտարկվել են քննարկվող հիմնախնդրի լուծման տարբեր ուղիներ, մշակվել են մեթոդիկաներ իրավագիտական առարկաներից գիտելիքների յուրացման գործընթացը արդյունավետ դարձնելու, սովորողների գործառութային կոմպետենցիաների ձևավորվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Համապատասխան հրապարակումներում բազմիցս նշվել է բուհերում ուսանողների իրավական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորվածության ցածր մակարդակի մասին:

Մեր նախնական հետազոտությունները նույնպես ցույց տվեցին, որ մանկավարժական բուհերի ուսանողները բավականաչափ խորությամբ չեն տիրապետում դիտարկվող բնագավառի գիտելիքներին, մինչդեռ քաղաքացիական հասարակության կառուցման համակարգային և կոմպետենտային ժամանակակից մոտեցումների տեսանկյուններից ելնելով՝ չափազանց արդիական է իրավագիտական առարկաների, մասնավորապես

«Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հիմնախնդիրը: Մասնագիտական տարբեր աղբյուրների վերլուծությունը ցույց տվեց, որ ՀՀ-ում իրավագիտական առարկաների դասավանդման մեթոդիկային նվիրված գիտական հետազոտությունները խիստ սակավ են:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սահմանադրական իրավունքը պետության իրավական համակարգի առաջատար ճյուղն է, որով կարգավորում են կյանքի առավել կարևոր և բարդ ոլորտները (քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլն): Սահմանադրական իրավունքից է բխում ազգային իրավունքի ամբողջ համակարգը: Ուստի կարծում ենք, որ նպատակահարմար է բուհի բոլոր ֆակուլտետներում դասավանդել «Սահմանադրական իրավունք» առարկան: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործումը՝ ելնելով բարձրագույն կրթության արդիականացման ժամանակակից մոտեցումներից:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այսօր այդ ոլորտում առկա են որոշակի հակասություններ՝

- արդի ժամանակաշրջանում իրավական կրթության մեթոդիկայի կատարելագործման անհրաժեշտության և բուհական կրթության համակարգում այդ գործընթացի ոչ բավականաչափ արդյունավետ իրականացման միջև,
- «Սահմանադրական իրավունք» առարկայի ուսումնասիրության կարևորության և իրավագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայում այն պատշաճ մակարդակով հաշվի չառնելու միջև:

Այս խնդիրների լուծման անհրաժեշտությամբ է պայմանավորված մեր հետազոտության թեման:

<u>Հետազոտության նպատակն</u> է առաջարկել և փորձարարությամբ հիմնավորել «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա՝ հաշվի առնելով կրթության արդիականացման անձնային-գործունեական, մարդաբանական, կոմպետենտային, համակարգային, պատմական, համեմատական մոտեցումները:

<u>Հետազոտության օբյեկտը</u> մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u> «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդական համակարգն է:

Հետազոտության հիմքում ընկած է հետևյալ **վարկածը:** Մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայից ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումը արդյունավետ կլինի, եթե՝

- վերլուծվի հետազոտության հիմնախնդրին նվիրված մասնագիտական՝ հոգեբանական, մանկավարժական, իրավագիտական, մեթոդական գրականությունը, առանձնացվեն ելակետային այն դրույթներն ու մոտեցումները, որոնք կազմում են «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդաբանական հիմքը,
- բացահայտվեն և հաշվի առնվեն «Սահմանադրական իրավունք» առարկայի գործառույթները և մանկավարժական բուհում նրա ուսուցման առանձնահատկությունները,

- ուսումնասիրվեն և համեմատական վերլուծության ենթարկվեն մանկավարժական բուհերում առկա «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագրերը և առարկայական չափորոշիչները, և ելնելով դրանից՝ «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագիրը կազմվի ըստ մոդուլների, որոշարկվեն յուրաքանչյուր թեմայի չափորոշչային պահանջները, ուսուցման ձևերը, տեխնոլոգիաները, մեթոդները,
- սահմանվեն «Սահմանադրական իրավունք» առարկայից ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման, իրավագիտակցության ձևավորման չափանիշները, ցուցանիշները և մակարդակները,
- առաջադրվի և փորձարարությամբ հիմնավորվի «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա, որը կներառի ուսուցման մոդուլային ծրագիրը, տեխնոլոգիաները, մեթոդները, միջոցները, ձևերը և նրա իրականացման մանկավարժական պայմանները:

<u>Հետազոտության նպատակով և վարկածով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.</u>

1. Վերլուծել հետազոտության հիմնախնդրին նվիրված մասնագիտական՝ հոգեբանական, մանկավարժական, իրավագիտական, մեթոդական գրականությունը, առանձնացնել ելակետային այն դրույթներն ու մոտեցումները, որոնք կազմում են «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդաբանական հիմքը:
2. Բացահայտել «Սահմանադրական իրավունք» առարկայի գործառույթները և նրա դասավանդման առանձնահատկությունները:
3. Ուսումնասիրել և համեմատական վերլուծության ենթարկել մանկավարժական բուհերում «Սահմանադրական իրավունք» առարկայի գործող ծրագրերը և առարկայական չափորոշիչները, և դրա հիման վրա ըստ մոդուլների վերամշակել «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագիրը, իրականացման ձևերը, տեխնոլոգիաները և չափորոշչային պահանջները:
4. Սահմանել «Սահմանադրական իրավունք» առարկայից ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման, իրավագիտակցության ձևավորման չափանիշները, ցուցանիշները և մակարդակները:
5. Առաջարկել և փորձարարությամբ հիմնավորել «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա, որը կներառի առարկայի բովանդակությունը, վերամշակված մոդուլային ծրագիրը, ուսուցման սկզբունքները, տեխնոլոգիաները, մեթոդները, միջոցները, ձևերը և նրա իրականացման մանկավարժական պայմանները:

<u>Հետազոտության մեթոդները.</u> առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**՝

- տեսական՝ հոգեբանամանկավարժական, մասնագիտական և մեթոդական գրականության, փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն, տվյալների համեմատում, ընդհանրացում, վերացարկում, ամփոփում,

- էմպիրիկ՝ դիտում, անկետավորում, թեստավորում, զրույց, հարցազրույց, փորձարարական ուսուցում, գործունեության արդյունքների գնահատում, մանկավարժական գիտափորձ,
- վիճակագրական մեթոդներ՝ գիտափորձի ընթացքում ստացված տվյալների մաթեմատիկական մշակում, արդյունքների տրամագրային պատկերում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերն են՝

- իրավական կրթության, իրավագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ հայեցակարգերն ու տեսությունները (Ս.Ս.Ալեքսեև, Վ.Ս.Աֆանասև, Գ.Պ.Դավիդով, Ա.Վ.Դրուժկովա, Ե.Ա.Պևցովա, Ն.Վ.Կուրենկովա, Օ.Ա.Նիկիտինա, Վ.Վ. Տիշչենկո, Ա.Պ.Արշակյան և այլք),
- ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների, ձևերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները (Մ.Մ.Մկրտչյան, Մ.Գ.Աստվածատրյան, Հ.Հ.Պետրոսյան Ի.Ս.Յակիմինսկայա, Ա.Ա.Վերբիցկի, Ս.Ա.Շմակով, Վ.Ս.Կուկուշկին, Դ.Ն.Քավթարաձե, Մ.Մ.Լևինա, Ա.Բ.Բուզիկինա, Դ.Վ.Չերնիլևսկի, Ի.Բ.Սեննովսկի, Լ.Ն.Մատրոսովա, Տ.Վ.Սաֆրոնովա, Գ.Կ.Սելևկո, և այլք),
- կրթության մարդաբանական, անձնագործունեական, կոմպետենտային և համակարգային մոտեցումները (Ի. Լ. Բիմ, Ի. Ա. Զիմնյայա, Վ. Վ. Սաֆոնովա, Վ. Դ. Շադրիկով, Ն.Ն.Գավրելենկո):

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2011-2012թ.թ.) իրականացվել է մանկավարժական բուհերում իրավագիտական առարկաների, «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման իրական վիճակի ուսումնասիրում: Ուսումնասիրվել և վերլուծվել են հետազոտական հիմնախնդրի վերաբերյալ ատենախոսական հետազոտություններ, հոգեբանամանկավարժական, մեթոդական, իրավագիտական գրականություն և կրթական ծրագրեր՝ «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետության ապահովման ուղղությամբ տարբեր մոտեցումների բացահայտման նպատակով: Արդյունքում սահմանվել են հետազոտության նպատակը, առարկան, վարկածը, խնդիրները: Ուսումնասիրվել է առարկան դասավանդող դասախոսների պրակտիկ փորձը: Այս փուլում իրականացվել է արձանագրող փորձարարություն՝ մանկավարժական բուհերում «Սահմանադրական իրավունք» ուսումնասիրող ուսանողների գիտելիքների մակարդակը ախտորոշելու նպատակով:

Երկրորդ փուլում (2012-2013թ.թ.) տեսականորեն հիմնավորվել են «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանն ուղղված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներն ու մոտեցումները: Նախապատրաստվել է փորձարարական նյութը՝ մանկավարժական հետազոտության անցկացման համար, որից հետո իրականացվել են փորձարարական աշխատանքներ՝ առաջադիր աշխատանքային վարկածը ստուգելու համար:

Երրորդ փուլում (2013-2014թ.թ.) իրականացվել է մանկավարժական փորձարարություն, որի ընթացքում փորձարարական աշխատանքների միջոցով հիմնավորվել է մեր կողմից մշակված ««Սահմանադրական իրավունք»» առարկայի դասավանդման մեթոդիկայի արդյունավետությունը: Կատարվել է

փորձարարության արդյունքների վերլուծություն, ընդհանրացում և ատենախոսության ձևավորում:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ՝

- բացահայտվել են մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայի գործառույթները և առանձնահատկությունները, տրվել է «իրավական կոմպետենտություն» հասկացության հեղինակային սահմանումը,
- վերամշակվել է «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագիրն ըստ մոդուլների, առաջադրվել են յուրաքանչյուր մոդուլի ուսուցման ձևերը, մեթոդները, միջոցներն ու տեխնոլոգիաները և չափորոշչային պահանջների բովանդակությունը,
- բացահայտվել և հիմնավորվել են «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման գործընթացում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների, ձևերի կիրառման հնարավորությունները և դրա հիման վրա մշակվել և առաջարկվել է մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա,
- որոշակիացվել և հիմնավորվել են «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետության մանկավարժական պայմանները,
- սահմանվել են «Սահմանադրական իրավունք» առարկայից ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման, իրավագիտակցության ձևավորման չափանիշները, ցուցանիշները և մակարդակները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Մեր կողմից վերամշակված «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկան որոշակի առումով կհարստացնի իրավագիտության դասավանդման մեթոդիկան տեսական նոր մոտեցումներով:

Հետազոտության գործնական նշանակությունը: «Սահմանադրական իրավունք» առարկայի՝ մշակված մոդուլային ծրագիրը, նրա իրականացման մեթոդիկան, գործնական օգնություն կլինեն բուհերում այդ առարկան դասավանդողների, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում հասարակագիտություն առարկան դասավանդող ուսուցիչների համար: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես մանկավարժական, այնպես էլ այլ բուհերում իրավագիտական այլ առարկաների դասավանդման գործընթացում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները.**

1. «Սահմանադրական իրավունք» առարկայի գործառույթների և մանկավարժական բուհում նրա ուսուցման առանձնահատկությունների բացահայտումը նպաստում է առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանը, որը կարևոր պայման է ուսանողների իրավական գիտելիքների արդյունավետ յուրացման, կարողությունների և հմտությունների, մասնագիտական կոմպետենտության, իրավագիտակցության, իրավական մշակույթի զարգացման համար:
2. «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման՝ մեր կողմից առաջարկվող մեթոդիկան, որը ներառում է առարկայի

բովանդակությունը, մոդուլային ծրագիրը, ուսուցման սկզբունքների, տեխնոլոգիաների, մեթոդների, միջոցների և ձևերի համալիրը, ապահովում է ուսանողների իրավական գիտելիքների յուրացման, մասնագիտական կարողությունների և հմտությունների տիրապետման և իրավագիտակցության ձևավորման գործընթացի արդյունավետությունը:

3. «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետության ապահովման մեր կողմից առաջարկվող մանկավարժական պայմանները, որոնք նպաստում են առաջարկվող մեթոդիկայի հաջող իրականացմանը.
   - զարգացնող կրթական միջավայր,
   - ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում,
   - ուսանողի պահանջմունքադրդապատճառային ոլորտի խթանում,
   - մեդիատեղեկատվական ռեսուրսների հասանելիություն,
   - ըստ չափորոշիչային պահանջների՝ ծրագրային նյութի նպատակային տրոհում,
   - ուսուցման գործընթացի համակառավարման ապահովում՝ ելնելով ուսանողակենտրոն մոտեցումից:
4. Սահմանադրական իրավունք առարկայից ուսանողների գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների տիրապետման, իրավագիտակցության ձևավորման չափանիշների, ցուցանիշների և մակարդակների որոշակիացումը նպաստում է ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և հետադարձ կապի ապահովմանը:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված է մանկավարժական փորձարարության արդյունքներով և եզրակացություններով, ուսուցման մեթոդիկաների ժամանակակից տեսությունների համալիր ուսումնասիրությամբ, ինչպես նաև հեղինակի գիտական ներդրմամբ: Հետազոտության բազա են հանդիսացել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ն, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանը և Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը:

Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումը: Ատենախոսությունը քննարկվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի իրավագիտության և նրա դասավանդման մեթոդիկայի, մանկավարժության տեսության և պատմության ամբիոններում: Ատենախոսության նյութերը ներկայացվել են միջազգային գիտաժողովում և տպագրված հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 147 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝«Իրավական կրթության տեսական-մեթոդաբանական հիմքերը» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Իրավական կրթության զարգացման պատմատեսական նախադրյալները»** ենթագլխում դիտարկված են իրավաբանական կրթության դերի արժևորման, անձի իրավական գիտելիքների հարստացման ու իրավական գիտակցության զարգացման խնդիրները պատմական տարբեր ժամանակահատվածներում:

Նշվում է, որ ըստ էության՝ հռոմեական իրավունքը հիմք է հանդիսացել հետագայում տարբեր երկրների իրավական համակարգերի և իրավական կրթության զարգացման համար: Դեռևս հին ժամանակներից սկսած իրավական դաստիարակությանը մեծ ուշադրություն է դարձվել: Հայ ժողովրդի պատկերացումները սովորութային իրավունքի, բարոյական նորմերի, արժանապատվության, պարտքի և պատասխանատվության մասին արտացոլված են ժողովրդական բանահուսության մեջ, հեքիաթներում, «Սասունցի Դավիթ» էպոսում:

Հայաստանում իրավագիտական միտքը հատկապես զարգացում է ապրել 12-13-րդ դարերում: Հատկապես շեշտվում է Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ) ավանդը միջնադարյան իրավագիտական մտքի զարգացման գործում: Նա իր «Դատաստանագիրք» աշխատությամբ մի նոր աստիճանի բարձրացրեց հայ իրավագիտական միտքը: Գիտական տեսանկյունից մեր հետազոտության համար մեթոդաբանական նշանակություն ունի Մխիթար Գոշի՝ մեր առաջին օրենսգիրք-դասագրքի հեղինակի «Դատաստանագիրք Հայոց» աշխատությունը, որը բաղկացած է երեք բաժնից: 12-րդ դարում հռչակավոր իրավագետի Գետիկի վանքում բացած իրավագիտության մասնագիտական դպրոցը առաջինն էր տարածաշրջանում: Այստեղ հիմնականում ուսումնասիրում էին իրավագիտական-օրենսդրական, փիլիսոփայական, հասարակագիտական առարկաներ:

Բարոյաիրավական հարցերն իրենց արտացոլումն են գտել նաև 14-րդ դարի մեծագույն փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Տաթևացու «Սահմանադրություն դաստիարակության», «Քարոզգիրք» աշխատություններում:

Իրավագիտական միտքը զարգանում էր նաև միջնադարյան Եվրոպայում: Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի համալսարաններում դասավանդվում էր նաև իրավագիտություն առարկան:

Իրավունքի վերաբերյալ առաջին գիրքը, որի հեղինակը հայտնի իրավաբան Ռինգելբերգն էր, կրում էր «Իրավունքի հանրագիտարան» անվանումը, երևան է եկել 1541թ.:

18-րդ դարի ֆրանսիացի լուսավորիչները՝ Դենի Դիդրոն, Հելվեցիուսը, Ժան Ժակ Ռուսոն իրենց աշխատություններում զարգացրին եվրոպական

իրավաքաղաքական միտքը՝ հիմնված օրենքի և իրավունքի, բարոյական նորմերի պահպանման վրա:

19-20-րդ դարերում արդեն արդյունաբերության և տեխնիկայի բուռն զարգացումը պայմանավորվում է իրավունքի ուսումնասիրման պահանջմունքի անհրաժեշտությունը: Զարգանում է իրավագիտական միտքը, որում քննարկվում են նաև աճող սերնդի իրավական կրթության և դաստիարակության հարցերը /Կ.Դ.Ուշինսկի, Ա.Պ. Կունիցին, Վ.Պ.Կաշչենկո, Ա.Ի. Հեսսեն, Բ.Ա. Կիտյակովսկի և այլք/:

Դիտարկված և համեմատական վերլուծության է ենթարկված եվրոպական տարբեր երկրներում իրավական կրթության և դաստիարակության դրվածքը: Նշվում է, որ Հայաստանի անկախացումից հետո ձևավորվում է նոր տիպի «Սահմանադրական իրավունք», որը համապատասխանում է իրավական պետության և նրա կողմից որպես բարձրագույն արժեք ընկալվող մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատության ընկալման ժամանակակից մտածողությանը: Այսօր հասարակությունը կանգնած է նոր տիպի սահմանադրական իրավունքի ձևավորման երկընտրանքի առջև: Փաստ է, որ սահմանադրական իրավունքի տիպերի կտրուկ փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողնում Սահմանադրական իրավունքի՝ որպես գիտաճյուղի զարգացման վրա, որը ամենաքաղաքականացվածն է և որի կայացումը դեռևս շարունակվում է: Սահմանադրական իրավունքը՝ որպես գիտություն, հարստանում է փիլիսոփայական, սոցիոլոգիական հայեցակարգային դրույթներով և մոտեցումներով՝ տարբեր հիմնախնդիրների սահմանադրական, իրավական կարգավորման տեսանկյունից:

Դիտարկված այս հիմնախնդիրների համատեսքստում «Սահմանադրական իրավունք»ի ուսումնասիրությունը անհրաժեշտ է ուսանողների կողմից այդ գիտաճյուղի սկզբունքների, հասկացությունների, կատեգորիաների տիրապետման առումով:

«Մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայի նպատակը, խնդիրները և նրա դասավանդման մեթոդիկայի զարգացման միտումները» խորագրով երկրորդ ենթագլխում հիմնավորվում է, որ գլոբալ հասարակական փոփոխությունների արդի ժամանակաշրջանում ավելի ակնհայտ է դարձել հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի զարգացման անհարժեշտությունը որպես իրավական հասարակության և պետության կայացման կարևոր պայման: Այս նպատակի իրագործումը կրթության համակարգի գերակա խնդիրը պետք է լինի: Կրթական հաստատություններում իրավագիտության հիմունքների ուսումնասիրումը անշուշտ կնպաստի այս հարցի լուծմանը:

Մեր կարծիքով, հատկապես մանկավարժական բուհերում, կրթության բովանդակության մեջ որպես պարտադիր բաղադրիչ պետք է ներառել «Սահմանադրական իրավունք» առարկան, քանի որ հիմնարար նշանակություն ունի իրավունքի այլ ճյուղերի համար: Այս տեսանկյունից դիտարկված և հիմնավորված են մանկավարժական բուհերում «Սահմանադրական իրավունք» դասընթացի նպատակը, խնդիրները և նրա դասավանդման մեթոդիկայի զարգացման միտումները:

Ելնելով մանկավարժական բուհերում իրավական կրթության խնդիրներից և նպատակներից՝ մենք հետազոտության ընթացքում բացահայտել

ենք «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման առանձնահատկությունները՝

- իրավագետի մասնագիտությանը ներկայացվող հասարակության պահանջների հաշվառման անհրաժեշտությունը,
- տեսական նյութի հաղորդման ավանդական ձևից անցումը ինտերակտիվ փոխգործակցության,
- «Սահմանադրական իրավունք» առարկայի ինտեգրատիվությունը
- ուսանողակենտրոն մոտեցումը որպես մանկավարժական փոխազդեցության կողմնորոշիչ
- մասնագիտական կրթության շարունակականությունը:

Իրավաբանական կրթության միջոցով լուծվում են մասնագետների իրավական կոմպետենտության ձևավորման խնդիրները, առաջին հերթին այնպիսի քաղաքացու ձևավորումը, ով գիտակցում է իրավական պետության կայացման գործում իր դերը, տիրապետում է իրավական մշակույթի բարձր մակարդակի:

Այդ տեսանկյունից դիտարկված են անձի իրավական մշակույթի կառուցվածքային բաղադրիչները: Տրված են «իրավական մշակույթ» հասկացության սահմանումը:

Հիմնավորված է, որ իրավական մշակույթը հենվում է անձի իրավագիտակցության վրա: Իրավագիտակցությունը իրավական նորմերի տեսանկյունից աշխարհի հոգևոր յուրացման ձև է, այն ունի ինտեգրատիվ բնույթ և ձևավորվում է հասարակության պահանջմունքներին համապատասխան՝ վերափոխելով իրավական իրականությունը: Իրավագիտակցությունը հասարակական գիտակցության ձև է, իրենից ներկայացնում է հայացքների, համոզմունքների, հույզերի ամբողջություն է: Ուսանողների իրավագիտակցության ձևավորմանը նպաստում են նպատակաուղղված իրավաբանական կրթության գործընթացը և օբյեկտիվ այլ գործոնները: Այդ գործընթացում տեղի է ունենում իրավական գիտելիքների, արժեքների, վարքի իրավական նորմերի յուրացում, կրթական տարածքում ձևավորվում են դասավանդող-ուսանող նոր հարաբերություններ, ուսուցման ինովացիոն մեթոդների որոնում և ներդրում, որը ապահովում է իրավունքի ուսուցման կրթական, դաստիարակչական, զարգացնող և սոցիալական գործառույթները: Իրավական կրթության և իրավագիտակցության ձևավորման նպատակը իրավական կոմպետենտությունն է՝ ձեռքբերված իրավական գիտելիքների, կարողությունների, հմտությունների կյանքի տարբեր իրավիճակներում իրավական խնդիրների լուծման նպատակով ինքնուրույնաբար կիրառելու կարողունակությունը:

Կոմպետենտային մոտեցման շրջանակներում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման գործընթացում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը, որոնցով պայմանավորված է անձի մասնագիտական կայացումը:

Որոշակիացված են իրավական կոմպետենտության կառուցվածքային բաղադրիչները: Իրավական կոմպետենտության կառուցվածքում մենք առանձնացրել ենք հետևյալ կոմպետենցիաները՝

- առանցքային կոմպետենցիա,
- առարկայական կոմպետենցիա

- երկխոսական, խոսույթային կոմպետենցիա,
- հաղորդակցական կոմպետենցիա,
- տեխնոլոգիական կոմպետենցիա,
- մասնագիտական ռազմավարական կոմպետենցիա:

Տրված է «իրավական կոմպետենտություն» հասկացության հեղինակային սահմանումը: Մենք իրավական կոմպետնետությունը սահմանում ենք որպես մասնագիտական, առանցքային, հաղորդակցական,երկխոսության (դիսկուրսիվ) կոմպետենցիաների տիրապետման և ոլորտի իրազեկվածության որոշակի մակարդակը, որը կապահովի անձի արդյունավետ գործունեությունը մասնագիտական ոլորտում:

«Իրավական կրթության բովանդակության արդիականացումը բուհում ժամանակակից կրթական մոտեցումների համատեքստում» խորագրով երրորդ ենթագլխում քննարկված և հիմնավորված է մանկավարժական բուհում իրավական կրթության արդիականացման հիմնախնդիրը ժամանակակից կրթության մոտեցումների համատեքստում:

Նշվում է, որ ելնելով մասնագիտական կրթության արդիականացման խնդիրներից՝ ներկայումս փոխվել են մասնագետին ներկայացվող պահանջները. մասնագիտական գիտելիքների յուրացումը այսօր բավարար չէ, այժմ հասարակությանը անհրաժեշտ է տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվող, ճիշտ որոշումներ կայացնող, պատասխանատու և թիմային արդյունավետ աշխատանքի պատրաստ, կոմպետենտ մասնագետ:

Ժամանակակից մանկավարժական բուհում իրավական կրթության նպատակը համապատասխան մասնագիտացում և բարձր որակավորում ունեցող իրավագետ-մանկավարժի պատրաստումն է, ով պետք է ձգտի մասնագիտական անընդհատ աճի, տիրապետի կոմպետենցիաների որոշակի մակարդակի: Նշվում է, որ մանկավարժական բուհում իրավական կրթության արդիականացումը ռազմավարական նշանակության խնդիր է և այն առաջին հերթին ենթադրում է իրավագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի կատարելագործում: Հիմնավորվում է, որ բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումների և դրա հիման վրա կրթության նպատակների վերաիմաստավորման արդի փուլում առավել էական է իրավական կրթության նկատմամբ *կոմպետենտային, պատմական, համեմատական, համակարգային, մարդաբանական, անձնակենտրոն գործնական մոտեցումների հաշվառումը*:

Կրթության արդիականացման ժամանակակից մեթոդաբանական մոտեցումների դիտարկումը թույլ տվեց մեզ բացահայտելու իրավական կրթության գործընթացի օրինաչափությունները, հակասությունները, որոնք և հիմք հանդիսացան «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի մշակման համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Սահմանադրական իրավունք առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հիմնախնդիրը»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ «**«Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդական համակարգի բնութագիրը» խորագրով** ենթագլխում հիմնավորվում է, որ մանկվարժական բուհերում իրավական կրթության արդյունավետության հիմնահարցը ՀՀ պետական կրթական քաղաքականության գերակա խնդիրներից

մեկն է: Եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու միտումները պահանջում են ուսուցման մեթոդիկաների կատարելագործում, նոր մանկավարժական տեխնոլոգիաների ներդնում:

Մանկավարժական բուհերում իրավագիտական առարկաների ուսումնասիրության նպատակը հանրակրթական դպրոցներում «Հասարակագիտություն» առարկան դասավանդող մանկավարժական կադրերի պատրաստումն է, որը ենթադրում է իրավական առարկաների դասավանդման մեթոդական համակարգի կատարելագործում, դրանց տեխնոլոգիական ապահովման արդյունավետ պայմանների առաջադրում:

Բուհում դասավանդվող իրավագիտական առարկաների շարքում բացառիկ կարևորություն ունի «Սահմանադրական իրավունք» առարկան, որի ուսումնասիրումը ենթադրում է դասավանդման արդյունավետ մեթոդիկայի կիրառում, որը կնպաստի ուսանողների իրավական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը, իրավագիտակցության և իրավական կոմպետենտության ձևավորմանը, ուստի այդ առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործումը ռազմավարական նշանակության խնդիր է:

Այս խնդրի լուծման նպատակով նորովի են սահմանվել դասընթացի նպատակը, խնդիրները, մանկավարժական պայմանները, նորացվել է չափորոշիչային պահանջների բովանդակությունը: Մեր կողմից առաջադրվել են հետևյալ մանկավարժական պայմանները.

- զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում,
- ուսանողի պահանջմունքադրդապատճառային ոլորտի խթանում,
- ուսանողների ուսումնական գործունեությունը ակտիվացնող, մասնագիտական կարողությունները զարգացնող թեստերի և գործնական առաջադրանքների ներդնում,
- մեդիատեղեկատվական ռեսուրսների հասանելիության ապահովում,
- ծրագրային նյութի նպատակային տրոհում՝ ըստ չափորոշիչային պահանջների,
- ուսուցման գործընթացի համակառավարման ապահովում՝ ելնելով ուսանողակենտրոն մոտեցումից:

Մշակվել է «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագիրը ըստ մոդուլների և յուրաքանչյուր մոդուլի իրականացման ձևերն ու տեխնոլոգիաները:

Որոշարկված է «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի բովանդակությունը:

Դիտարկված են դասավանդման գործընթացի արդյունավետությունն ապահովող ուսուցման մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման հիմնախնդիրը մանկավարժական գրականության մեջ:

Ներկայացված են հետազոտության ընթացքում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման գործընթացում մեր կողմից կիրառված ուսուցման տեխնոլոգիաների, մեթոդների բնութագրերը, հիմնավորված է դրանց կիրառման հնարավորությունները: Մեր կողմից առաջարկվող մեթոդիկան ներառում է մշակված առաջադրանքները, հարցաշարերը, թեստերը ըստ ծրագրային նյութի, դասերի նմուշօրինակները, որոնց կիրառումը բարձրացնում

է ուսանողների իրավագիտակցությունը, իրավական գիտելիքների, իրավական կոմպետենտության մակարդակը:

Երկրորդ՝ «**Սահմանադրական իրավունք առարկայի դասավանդման առաջարկվող մեթոդիկայի փորձարարական ստուգումը և արդյունքների վերլուծությունը**» խորագրով ենթագլխում ներկայացված են հիմնախնդրի վերաբերյալ առաջադրված տեսական դրույթների և մշակված մեթոդիկայի արդյունավետության ստուգման և հիմնավորման նպատակով իրականացված փորձարարական հետազոտության մեթոդները, խնդիրները և ընթացքը: Մանկավարժական փորձարարական հետազոտության իրականացման համար կիրառվել են ինչպես դասավանդման ավանդական մեթոդիկաներ, այնպես էլ ուսուցման գործընթացի իրականացման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդիկաներ:

«Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեր կողմից առաջարկվող մեթոդիկան հիմնվել է առարկայի վերամշակված ծրագրի վրա:

Ներկայացված է մեր կողմից մշակված «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագրային բովանդակությունը: Բնութագրված են առաջարկվող մեթոդիկայի ներդրման արդյունքում ուսանողների գիտելիքների յուրացվածության, կարողությունների և հմտությունների տիրապետման, իրավագիտակցության ձևավորվածության չափանիշները, ցուցանիշները և մակարդակները:

Ներկայացված են առարկան դասավանդողներին ուղղված հարցաշարի բովանդակությունը և արդյունքների վերլուծությունը:

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ առաջին հարցին՝ դասավանդման գործընթացում կիրառո՞ւմ են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, դրական պատասխան են տվել իրավագիտական ֆակուլտետում «Սահմանադրական իրավունք» առարկան դասավանդող դասախոսների 38%-ը, բացասական՝ 45%-ը, չեն կարող պնդել՝ 17%-ը: Երկրորդ հարցին՝ որպես ուսանողների ուսումնաճանաչողական գործունեության խթանման մեթոդներ, դասախոսների 43%-ը նշել էին ուսուցման պրոբլեմային մեթոդները, 37%-ը՝ փոխներգործուն մեթոդները, 20%-ը՝ ավանդական մեթոդները: Բավականին տարբեր էին կարծիքները դասագործընթացի արդյունավետության վրա ուսուցման տեխնոլոգիաների կիրառման ազդեցության վերաբերյալ. հարցվածների 44%-ը գտնում են, որ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը դրական ազդեցություն է թողնում ուսուցման գործընթացի վրա, 30%-ը գտնում է, որ դրանք աշխատատար և ժամանակատար են և բացասական ազդեցության են թողնում դասագործընթացի արդյունավետ կառավարման վրա, իսկ 26%-ը չեն կողմնորոշվում իրենց պատասխաններում:

Այն դասախոսները, ովքեր իրենց գործունեության մեջ կիրառում են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, նշում են դասավանդման գործընթացում դրանց կիրառման արդյունավետությունը:

Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ դասախոսների մեծամասնությունը իրենց գործունեության ընթացքում լիարժեքորեն չեն կիրառում ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ: Որպես օբյեկտիվ պատճառ հանդիպող դժվարություններից հարցվածները նշում են անհրաժեշտ փորձի բացակայությունը, մեծ ծանրաբեռնվածությունը, մեթոդական և

մանկավարժական համապատասխան գրականության սակավությունը, լսարանների անբավարար տեխնիկական հագեցվածությունը:

Բնութագրված է ձևավորող փորձարարության փուլում դասախոսների և ուսանողների շրջանում իրականացված նախնական աշխատանքի բովանդակությունը, մասնավորապես ներկայացվել են ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների, փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունքում սովորողների գիտելիքների յուրացվածության, մասնագիտական կարողությունների և հմտությունների տիրապետման, իրավագիտակցության ձևավորման փուլերը՝ մեր կողմից դրանց ձևավորվածության մակարդակների, չափանիշների և ցուցանիշների հստակեցման համատեքստում:

Ներկայացված է «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման արդյունավետության ապահովման մեր կողմից առաջարկվող մեթոդիկայի բովանդակությունը՝ դասագործընթացում ստեղծագործաբար կիրառված ուսուցման տեխնոլոգիաների, մշակված ինտեգրված դասերի, առաջադրանքների օրինակներ: Առաջարկվող մեթոդիկայի արդյունավետությունը պարզելու համար մեր կողմից անցկացվել է թեստավորում: Ուսումնասիրվել են մեթոդիկայի ներդրման արդյունքում ուսանողների իրավական գիտելիքների յուրացվածության, կարողությունների և հմտությունների տիրապետման և իրավագիտակցության ձևավորման մակարդակների դինամիկան փորձարարության վերջում՝ ըստ մշակված չափանիշերի /աղյուսակ1, տրամագիր 1/:

Աղյուսակ 1

Ուսանողների գիտելիքների յուրացվածության , կարողությունների և հմտությունների տիրապետման մակարդակները փորձարարության վերջում՝ ըստ սահմանված չափանիշների

Մակարդակները	Ուսանողների պատասխանները %-ով
Բարձր	30,3
Միջին	53,0
Ցածր	16,7



Տրամագիր 1. Ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետման մակարդակները փորձարարության վերջում՝ ըստ սահմանված չափանիշների

Մասնավորապես դիտարկված են մի շարք ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման արդյունքում ուսանողների իրավական գիտելիքների յուրացվածության, կարողությունների, հմտությունների տիրապետման մակարդակների դինամիկան՝ ըստ սահմանված չափանիշների:

Ներկայացված է փորձարարության ընթացքում ուսանողների իրավագիտակցության ձևավորվածության մակարդակի նախնական տվյալները, որոնք փաստում են, որ դեռևս առաջին կուրսում՝ փորձարարության սկզբում, ստուգողական և փորձարակական խմբում առկա է գրեթե միանման արդյունք. ուսանողների իրավագիտակցության մակարդակը տատանվում է ցածր և միջին մակարդակների շեմերում: Փորձարարության վերջում առաջարկվող մեթոդիկայի կիրառման արդյունքում արձանագրվել է ուսանողների իրավական գիտելիքների, կարողությունների, հմտությունների, իրավագիտակցության ձևավորվածության մակարդակի դրական դինամիկա:

Փորձարարությամբ փաստվեց, որ առաջարկվող մեթոդիկան դրականորեն է ազդում ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացման վրա: Համեմատական վերլուծության արդյունքները տրված են համապատասխան աղյուսակներում և տրամագրերում:

Այսպիսով՝ մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հիմնախնդրի շուրջ գիտահետազոտական ուսումնասիրությունների տեսական վերլուծությունը և մեր կողմից իրականացված փորձարարական հետազոտության արդյունքները հավաստեցին առաջադիր վարկածի ճշմարտացիությունը և թույլ տվեցին անելու հետևյալ **եզրակացությունները**.

1. «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդիկայի կատարելագործման հիմնախնդիրը իրավական պետության կառուցման ռազմավարության և կրթության արդիականացման ժամանակակից մոտեցումների տեսանկյունից չափազանց արդիական է: Այդ տեսանկյունից բացահայտված են ոլորտում առկա որոշակի հակասություններ:
2. «Սահմանադրական իրավունք» առարկայի մեթոդաբանական հիմքն են կազմում իրավագիտության դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումները, «Սահմանադրական իրավունք»

առարկայի բովանդակության ձևավորման և դասավանդման սկզբունքները: Մանկավարժական բուհում իրավագիտական կրթության բովանդակության արդիականացման գործընթացում էական են կոմպետենտային, համակարգային, համեմատական, անձնային-գործունեական, մարդաբանական մոտեցումները, որոնց հաշվառումը նպաստում է ուսանողների իրավաբանական կրթության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

3. Ելնելով հետազոտության նպատակից և առաջադիր վարկածի հաստատման անհրաժեշտությունից՝ բացահայտվել են «Սահմանադրական իրավունք» առարկայի գործառույթները, նպատակը, խնդիրները, դասավանդման առանձնահատկությունները և սկզբունքները, որոնց հիման վրա մշակվել և մանկավարժական բուհի կրթական գործընթացում ներդրվել է նրա դասավանդման արդյունավետ մեթոդիկա:
4. Մանկավարժական բուհերում «ՀՀ սահմանադրական իրավունք» առարկայի գործող ծրագրերի, առաջարկվող չափորոշիչների ուսումնասիրման և համեմատական վերլուծության հիման վրա, ըստ մոդուլների՝ վերամշակվել է «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագիրը: Առաջադրվել են յուրաքանչյուր մոդուլի ուսուցման ձևերը, միջոցներն ու տեխնոլոգիաները և չափորոշչային պահանջները, որոնց շնորհիվ ապահովվել է ուսանողների իրավագիտական գիտելիքների յուրացման, կարողությունների, հմտությունների տիրապետման և իրավագիտակցության ձևավորման գործընթացի արդյունավետությունը:
5. «Սահմանադրական իրավունք» առարկայից ուսանողների գիտելիքների յուրացվածության, կարողությունների, հմտությունների տիրապետման և իրավագիտակցության ձևավորվածության սահմանված չափանիշները, ցուցանիշները և մակարդակները հնարավորություն տվեցին հաստատելու մշակված մեթոդիկայի արդյունավետությունը և կիրառելիությունը:
6. Հետազոտության արդյունքում առաջադրված և փորձարարությամբ հիմնավորված «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մանկավարժական պայմանները՝ զարգացնող կրթական միջավայրի ապահովում, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, ուսանողի պահանջմունքա-դրդապատճառային ոլորտի խթանում, ուսանողների ուսումնական գործունեությունը ակտիվացնող, մասնագիտական կարողությունները զարգացնող թեստերի և գործնական առաջադրանքների ներդրում, մեդիատեղեկատվական ռեսուրսների հասանելիության ապահովում, ծրագրային նյութի նպատակային տրոհում՝ ըստ չափորոշչային պահանջների, ուսուցման գործընթացի համակառավարման իրականացում, ապահովում են մշակված մեթոդիկայի արդյունավետ ներդնումը մանկավարժական բուհի կրթական գործընթացում:
7. Փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությամբ պարզ դարձավ, որ «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մշակված արդյունավետ մեթոդիկայի ներդնումը մանկավարժական բուհի կրթական գործընթացում էականորեն բարձրացրեց ուսանողների

գիտելիքների, կարողությունների, հմտությունների և իրավագիտակցության ձևավորվածության մակարդակը:

8. «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մշակված մեթոդիկան կարող է արդյունավետորեն կիրառվել ավագ դպրոցի հասարակագիտության և մանկավարժական բուհերի իրավագիտական առարկաների դասավանդման գործընթացում, ինչպես նաև հետագա ուսումնասիրությունների և մշակումների համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ **հրատարակումներում.**

1. Միրզախանյան Լ. Մանկավարժական բուհում իրավական առարկաների դասավանդման ամիրաժեշտությունը, նպատակները և խնդիրները: Կրթության արդիականացման հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժական հարացույցերի համատեքստում, Երևան -2014, էջ 234-237:
2. Միրզախանյան Լ. Իրակավական կրթության բովանդակության արդիականացումը բուհում ժամանակակից կրթական մոտեցումների համատեքստում: Լրաբեր հասարակական գիտությունների: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, էջ 309-315:
3. Միրզախանյան Լ. Կեյս-ստադի տեխնոլոգիայի կիրառումը «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման գործընթացում: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ: Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես թիվ 2, Երևան-2014, էջ 66-71:

Мирзаханян Лилит Рубеновна

ПРОБЛЕМА СОВЕРШЕСТВОВАНИЯ ПРЕПОДАВАНИЯ ДИСЦИПЛИНЫ «КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО» В ПЕДАГОГИЧЕСКОМ ВУЗЕ РА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13. 00.02-“Методика преподавания и воспитания” /конституционное право/. Защита диссертации состоится 14-ого мая, 2015г., в 12^{00} часов на заседании специализированного совета “Педагогика” 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адрессу: 0010, Ереван, ул. Тигран Мец 17

Актуальность исследования.

Переход от знаниевого общества к обществу информационному обусловлен беспрецедентно высоким уровнем развития технической и технологической систем, которые ставят перед системой вузовского образования новые задачи.

Любая эпоха ставит образование перед социальными вызовами, которые, в свою очередь, предъявляют новые требования работникам сферы образования. В связи с этим в содержании правового образования, теории обучения и методике преподавания юридических дисципин возникли серьезные теоретические и методические проблемы, касающиеся в том числе и сферы обеспечения эффективности преподавания и усвоения знаний студентами по дисциплине «Конституционное право».

Наши предварительные исследования показали поверхностность знаний студентов педагогических вузов в анализируемой сфере, между тем с позиции современных системного и компетентностного подходов чрезвычайно актуальны проблемы совершенствования методики преподавания юридических дисциплин, в частности дисциплины «Конституционное право». Анализ специальной литературы показал, что научных исследований, посвященных методике преподавания юридических дисциплин, в РА пока недостаточно.

В конституционном праве берет свое начало вся система национального права. Именно по этой причине мы считаем целесообразным введение курса «Конституционное право» в учебные планы всех факультетов. В этом случае возникает необходимость разработки методики преподавания дисциплины «Конституционное право» в соответствии с современными подходами к модернизации вузовского образования.

Цель исследования – разработать и экспериментально обосновать эффективную методику преподавания дисциплины «Конституционное право» на основе личностно-деятельностного, антропологического, компетентностного, системного, исторического подходов.

Задачи исследования:

1. Анализировать профессиональную психологическую, педагогическую, методическую, юридическую литературу, обосновать исходные положения и подходы, которые составляют методологическую основу преподавания дисциплины «Конституционное право».
2. Выявить функции и особенности преподавания дисциплины «Конституционное право».
3. Изучить и провести сравнительный анализ действующих программ и предметных стандартов по дисциплине «Конституционное право» для педагогических вузов, на их основе доработать программу дисциплины «Конституционное право» в соответствии с модульным подходом и

разработать способы и технологии ее осуществления, содержание стандартных требований.

4. Установить критерии, показатели и уровни оценки усвоения знаний, умений и навыков студентов по дисциплине «Конституционное право», сформированности их правосознания.
5. Предложить и экспериментально обосновать эффективную методику преподавания дисциплины «Конституционное право», которая включит в себя содержание дисциплины, принципы, технологии, методы, средства, формы и педагогические условия ее обеспечения.

Научная новизна исследования состоит в том, что:

- определены функции и выявлены особенности дисциплины «Конституционное право» в педагогическом вузе, сформулирован авторский подход к определению «правовая компетентность».
- по модулям доработана программа дисциплины «Конституционное право» и предложены формы, средства, технологии обучения и содержание стандартных требований каждого модуля,
- выявлены и обоснованы возможности применения современных технологий обучения в процессе преподавания дисциплины «Конституционное право» и на их основе разработана эффективная методика преподавания дисциплины «Конституционное право» в педагогическом вузе,
- определены и обоснованы педагогические условия эффективности преподавания дисциплины «Конституционное право»,
- установлены критерии, показатели и уровни усвоения знаний, умений, навыков, сформированности правосознания студентов по дисциплине «Конституционное право».

Теоретическая значимость исследования. Доработанная методика преподавания дисциплины «Конституционное право» в определенной степени обогатила методику преподавания юридических дисциплин новыми теоретическими подходами.

Практическая значимость исследования. Разработанная модульная программа дисциплины «Конституционное право», методика ее реализации окажут практическую помощь вузовским преподавателям этого предмета. Результаты исследования могут быть использованы в практике преподавания в педагогических вузах и других юридических дисцплин.

Структура диссертации. Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы. Общий объем диссертации составляет 147 компьютерных страниц, 7 таблиц, 11 диаграмм.

LILIT R. MIRZAKHANYAN

MAJOR ISSUES OF METHODOLOGY ENHANCEMENT OF TEACHING CURRICULUM SUBJECT "CONSTITUTIONAL RIGHT" AT PEDAGOGICAL UNIVERSITIES OF THE REPUBLIC OF ARMENIA

Thesis submitted for the Degree of Candidate (PhD) of Pedagogical Sciences, Specialty Area: 13.00.02 "Teaching and Education Methodology", The official defence of the thesis will take place at Higher Attestation Commission's 020 Degree-awarding Scientific Council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on May 14, 2015, at 12^{00}am. (Address: 375010 Yerevan, Tigran Mets avenue, 17)

SUMMARY

The relevance of the research: The transition from the knowledge-based society to the information-based society is conditioned with an exceptionally high level of development of technical and technological systems that set forth new objectives higher education system.

During each period, education faces new social challenges which subsequently assert new requirements for educationalists. In this regard, considerate theoretical and methodological content-related issues emerge in the domain legal education, more explicitly, in the theory and methodology of teaching specific law-related subjects, framework legal bases as the "Constitutional Right", as well as, in ensuring the effectiveness of knowledge acquisition. The variety of solutions to the subject-matter issues has been observed by the aforementioned researchers, consequently, and, as a matter of fact, respective methodological settings have been advanced to make the knowledge acquisition in the realm of legal subject unit more effective, as well as to raise the level of learners' functional competences.

Our initial studies evidenced the unreasonably insufficient level of knowledge in the field of legal studies among the students of pedagogical universities, while from the perspective of modern system and competence-based approaches the issue of improving teaching methods of legal subject unit, and, in this context, the course "Constitutional Right" in particular, keeps gaining definite priority. The analysis of various professional sources has shown that there is a few number of researches conducted in the field of teaching legal subjects in the Republic of Armenia.

Being prior to and absolutely fundamental for the legal domain of the country and society, it should be reckoned as purposeful to teach the course "Constitutional Right" as a compulsory university subject covering all the specialties. Therefore, there is a growing necessity to develop the methodology of teaching the "Constitutional Rights" based on current and most up-to-date approaches of higher education.

The Aim of the research is to develop and provide experiment-based, empirically transparent validation on effective methodology of teaching "Constitutional Right" stemming from the pertinent competences, system-based scheduling, historically, comparatively, anthropologically, individually adjustable and/or upgradable–operational approaches.

The following objectives have been set forth on the basis of respective aims and hypothesis of the research:

1. *To analyse* the corresponding professional, psychological, pedagogical, legal, methodological sources of professional literature on the subject matter, justifying the baseline conditions and standpoints which provide the comprehensive methodological background for teaching the course "Constitutional Right";

2. *To identify* the functional peculiarities of “Constitutional Right” course, as well as the methodological characteristics of teaching this course;
3. *To study and make a comparative analysis* of the curricula and subject standards of the courses on “Constitutional Right of the Republic of Armenia” – already implemented in pedagogical universities – and, based on the respective fundamentals, submit the curricular subject “Constitutional Right”, as well as the pertinent ways of it further implementation, techniques and standard-driven requirements to module-based completion;
4. *To develop* measurable assessment bases for students’ knowledge on “Constitutional Rights” check-up, their capacities, skills, as well as the criteria of forming legal consciousness levelling, its indicators and levels;
5. *To suggest and empirically rationalise* – on specific experiment bases – the pedagogical requirements for ensuring the effectiveness of teaching “Constitutional Right” covering, thus, the content of the course, the module-based teaching programme, teaching principles, appropriate technologies, methods, means, forms, as well as the professionally predetermined educational environment.

The scientific novelty of the paper consists in the first endeavours to explore and develop:

- The functions and peculiarities of the course “Constitutional right” identified at Armenian State Pedagogical University;
- The curriculum development for the course of “Constitutional right” scheduled and detailed in accordance with modules and teaching forms, means and technologies as well as the respective content for benchmark requirements for each module;
- The application of modern technologies in “Constitutional Right” identified and justified with effective methodological explorations and finding elaborated at the Pedagogical University;
- The pedagogical conditions for effective teaching of “Constitutional Right” course set forth with relevant grounding;
- The students’ knowledge, capacities, skills determined in the outcomes of the course on constitutional right, criteria, indicators and levels of formation of legal consciousness defined.

The theoretical input of the research. The paradigm of the methods of teaching Law has been systemized and enriched with new theoretic and practical approaches on subject-oriented teaching and subject-specific methods.

The practical input of the research. The module-based course on “Constitutional Right”, together with the methods of its implementation and accomplishment are designed to be added to the relevant methodological support for respective university staff. The research outcomes may be utilized at pedagogical universities in the process of teaching other subjects of the legal module or subject unit of the curriculum.

The structure of the thesis. The thesis consists of introduction, two body chapters, conclusions, and the bibliography. The overall thesis length is 147 printed pages.